մժե.

Ընդ սառաֆօղլու Սարգիս Վարդապետին չկարացաք խօսիլ, զի նա ի պալատու եկեղեցին է ի Խ.օրեայ քարոզութեան. և բարի համբաւ նորա հնչէ ընդ ամենեցուն բերանս։ (Հ. Իգն. առ Մելգոնեան, 1760 մարտի 19. ի Կոստանդինուպոլիս)։

մժզ.

Ի Վիեննա մեծ պատրաստութիւն գոյ հարսանեաց որդւոյ թագուհւոյն. և աստի անտի դրամս ժողովէ թագուհին ի ծախ հարսանեաց. 8000 մարչիլ մաճառաց երկիրն պարտի տալ. 2000 արտիալ։ Բայց այժմ լուաք թէ մեծ յաղթութիւն արարեալ է ճէնռալ Լաւտօն վարատինցի, զի հարեալ ընդ 16000ի, զբազումս սպանեալ, և զբազումս ի գերի վարե[ա]լ. միայն 600 ճողոպրեալ են. կալեալ են և զմեծ ճէնռալն Ֆօգէդ, և զայլ փոքր ճէնռալս պռուշի։ (Հ. Թադէոս վրդ. առ Մելգոնեան, 1760 յուլիս 4. [Եղիսաբեթուպոլիս?])։

մժէ.

Թագաւոր քաղաքիս[1] ոչ գիտեմ որպէս զօրացոյց մեր տեսեալ՝ ետ թարգմանել ի տաճկական լեզու, և զի նոքա մինէճիմի, կամ ասացից էփիմէրիտէսի բանից մայիլ են. կարծեալ է, թէ այնպիսի ինչ իցէ, բայց յորժամ ոչ է գտեալ ի նմա զինդրելին իւր, ասացեալ է. Լաւ է ըստ հաչուին լուսնին. բայց յայլ բանս օտարոտի իմն զրոյցս բարբառի։ (Հ. Զաքարիա առ Մելգոնեան, 1760 Օգոստ. 19. [Կ. Պոլիս])։

մժը.

Ընդ աւուրս ընդ այնոսիկ սկսաւ այսր անդր տարածանիլ ժանտ ախտն, և այլ պէսպէս ցաւք բազմացեալ ի քաղաքիս զօրանան օր ըստ օրէ։ Մանաւանդ տուրևառութիւն ոսկերչաց, և ակնագործաց ի չուկային գրեթէ ամենևին դադարեալ է, և ամենեքեան ի վարանս տարակուսանաց չուարեալ կան և ոչ գիտեն թէ զինչ արասցեն...։ Եւ լուաք վասն միոյ ուրումն նախարարի, որ ի կողմանս փոքուն ասիոյ, թէ բազում զօրօք վտարանջեալ կամիցի գալ ի կողմանս յայսոսիկ, իսկ այժմ լռութիւն է վասն նորա. քանզի կարծեմ թէ հաճեցին աստի զմիտս նորա. և դարձաւ գնաց, ուր և երթալոց էր։... Վասն աւերման և կործանման տրապիզոն քաղաքին գրեցի միանգամ, և այժմ զնոյն գրեմ, թէ նա գրեթէ ի սպառ կործանեցաւ վասն երկպառակութեան զօրացն, որ ի ներքս ի բերդն և որ արտաքս, որպէս պատմեցին քաղաքացիք նորա. նոյնպէս սկսեալ է աւերութիւն և ի կողմանս կիւմիւշխանայի։ (Հ. Իգն. առ Մելգոնեան, 1760 Օգոստ. 19. ի Կոստանդինուպոլիս)։

մժթ.

Վասն գլխոյ Յովսեպոսի Փլատիանոսի եբրայեցւոյն գրեցի առ գերյարգելին վասն տպագրութեան, զոր ոմն ի մեծ վաճառականաց ծախիւք իւրովք կամի տպել. և զ500 յայնց վախքի արար

1. Մուսաֆա Գ.։